

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ

ԹԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ԿԱԶՄԵԼ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ /Ս.ՍԱԼՈՅԱՆ/

Հաստատվել է համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 11-ի թիվ-16_ որոշմամբ
(նիստի անստորագրությամբ)

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը.....	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն.....	4
2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն.....	4
2.2 Համայնքի սոցիալտնտեսական իրավիճակը.....	4
2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը.....	6
2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները.....	6
2.5 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն.....	7
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում.....	10
3.1 Համայնքի զարգացման տեսլական.....	10
3.2 Համայնքի զարգացման միջազանցական նպատակներ.....	14
4. ՀՀԶԾ ֆինանսավորում.....	16
5. ՀՀԶԾ մշտադիտարկումը (մոնիթորինգ)	17
Հավելված 1-Ծրագրերի անձնագրեր.....	18

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Թլիկ համայնքի 2017-2021թթ. Հնգամյա զարգացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2021 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները: Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել էին տեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակամիջավայրի և այլ գործոններ): Հնգամյա զարգացման ծրագիրը կազմված է չորս բաժիններից՝

1. Համայնքի իրավիճակի նկարագրում.

2. Նպատակների Մահմանում և գործողությունների պլանավորում.

3. Համայնքի զարգացման հնգամյա ծրագիր Ֆինանսավորում.

4. Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մոնիթորինգ:

Ծրագրի նախագիծը հիմք է հանդիսացել համայնքի ղեկավարի ծրագիրը կապված համայնքի բնակիչների կենսական պայմանների բարելավման, ինչպես նաև պետական, մարզային, տարածաշրջանային ռազմավարական նշանակության այլ ծրագրեր: Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմը, քննարկվել և հաշվի են առնվել հանրային լսումների արդյունքում ընդունելի համարված բոլոր առաջարկությունները:

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Համայնքի վարչական տարածքը կազմում է 2176.96 հա, գյուղը գտնվում է Արմավիր-Գյումրի ավտոմայրուղու ձախ մասում, հեռավորությունը մայրաքաղաքից՝ 100 կմ, մարզկենտրոնից՝ 95 կմ, տարածաշրջանային կենտրոնից՝ 40 կմ: Համայնքն իր վարչական սահմաններով սահմանակից է Գետափ, Հակո, Սորիկ, Նոր-Արթիկ և Շիրակի մարզի Անիպեմզա համայնքներին արևմուտքից՝ Թուրքիային:

Թլիկ գյուղը գտնվում է մարզկենտրոն Աշտարակ քաղաքից 70 կմ դեպի արևմուտք, Ախուրյան գետի ձախ ափին ծովի մակերևույթից 1320 մ բարձրության վրա: Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է ամռանը զով: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 16-27-ի սահմաններում, հունվարյանը՝ -8-22-ի սահմաններում: Գյուղում հաճախակի են չորային տարիները, որից հիմնականում տուժում է գյուղատնտեսական արտադրությունը: Համայնքի տարածքում կան բազալտի և ավազի հանքավայրեր: Բնակիչները հիմնականում ազգությամբ եզդիներ են:

Համայնքում հաշվառված է 56 տնտեսություն՝ 164 բնակչով, այդ թվում տղամարդիկ՝ 60 և կանայք՝ 104: Առկա բնակչության տարիքային կազմն այսպիսին է՝

- 0-6 տարեկան - 18 մարդ
- 7-17 տարեկան - 21 մարդ
- 18-62 տարեկան - 35 մարդ
- 63 և ավելի տարեկան - 3 մարդ

2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

Համայնքի 2016թ. Բյուջեի ընդհանուր տարեկան եկամուտների մեջ սեփական եկամուտները (հարկեր և տուրքեր, այլ եկամուտներ) կազմում են ընդամենը 25%, իսկ պաշտոնական դրամաշնորհների (պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ, պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)) տեսակարար կշիռն ընդհանուր մուտքերի մեջ կազմում է 75%: Մա նշանակում է, որ համայնքի բյուջեի մուտքերի մեծամասնությունը ստացվում է ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների ուղղությամբ, այսինքն համայնքի ֆինանսական անկախության (ինքնուրույնության) աստիճանն ցածր է և համայնքը մեծ կախվածության մեջ է գտնվում ՀՀ պետական բյուջեից:

Համայնքում չկա գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգման համակարգ, այդ պատճառով համայնքի բնակչությունը հողագործությունից մեծ եկամուտներ չի կարողանում ստանալ: Համայնքում ավելի զարգացած է անասնապահության ճյուղը:

2016թ. հունվարի 1-ի դրությամբ, համայնքի խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմել է 190, այդ թվում կով՝ 69, իսկ մանր եղջերավոր անասունների քանակը՝ 121, այդ թվում ոչխար՝ 2280, այծ՝ 25: Համայնքի գրեթե յուրաքանչյուր տնային տնտեսություն պահում է նաև որոշ քանակության թռչուններ, առավելապես՝ հավեր՝ հիմնականում սեփական կարիքների բավարարման համար:

Համայնքում անասնապահությամբ, թռչնապահությամբ արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու: Համայնքի բնակիչներն ունեն լուրջ խնդիրներ ու դժվարություններ արտադրված գյուղատնտեսական մթերքների իրացման հարցում:

Համայնքում գործում է հիմնական հանրակրթական դպրոց, որը նախատեսված է մինչև 120 աշակերտի համար, ներկայումս սովորում են 21 աշակերտ: Դպրոցում աշխատում են 14 աշխատող, որոնցից 9-ը մանկավարժներ են: Դպրոցի շենքը ներկայումս խիստ կարիք ունի ներսի

հիմնանորոգման խնդիր: Վերջին անգամ մասնակի նորոգվել է 2012թ.:Դպրոցում աշակերտները հիմնական կրթություն ստանալուց հետո,ցանկացողները ուսումը շարունակում են հարևան Արագածավան գյուղի Միջնակարգ դպրոցում: Առաջադիմություն ունեցող աշակերտներն էլ ուսումը շարունակում են Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում:

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայումս արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման առաջիկա հինգ տարիների համար սահմանված ծրագրերի ցանկը և ֆինանսավորման չափը այսպիսին է

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի մոտավոր արժեքը (հազ. դրամ)
1.	Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում	1000.0
2.	Ներհամայնքային ճանապարհների և փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացում	2900,0
3.	Համայնքի նոր ջրագծի կառուցում	30000.0
4.	Համայնքի գազաֆիկացում	35000.0

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

Աղյուսակ 1

Հ/հ	Մուտքերի անվանումը	2016թ. նախատ.	2016թ. փաստ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1	2	4	5	6	7	8	9	9
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	4961.8	4965.5	5097.4	5286.0	5529.1	5859.4	6159.4
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵՎԱՍՈՒՏՆԵՐ (1+2+3)*	4961.8	4965.5	5097.4	5286.0	5529.1	5859.4	6159.4
1.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	903.5	1004.3	1139.1	1155.0	1275.0	1280,0	1380,0
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	903.5	1004.3	1139.1	1155.0	1275.0	1280.0	1380,0

	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	5.0	0,001	5.0	5,0	5,0	10,0	10,0
	Հողի հարկ	898.5	900.7	1000,0	1000,0	1100,0	1100,0	1200,0
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	134.1	103.6	134.1	150,0	170,0	170,0	170,0
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	134.1	103.6	134.1	150.0	170.0	170.0	170.0
1.3	Ապրանքների հոգսագործման կամ գործունեության հրականացման թույլտվության վճարներ	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
	Տեղական տուրքեր	0,0	0,0	5,0	10,0	20,0	30,0	50,0
	Պետական տուրքեր	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
2.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	3748,3	3748,3	3748,3	3900,0	4000,0	4300,0	4500,0
2.1	Ընթացիկներ քիմիա շտոնական դրամաշնորհներ	3748,3	3748,3	3748,3	3900,0	4000,0	4300,0	4500,0
ա)	Պետական բյուջեի ցֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	3500,0	3500,0	3500,0	3600,0	3700,0	4000,0	4500,0
2.2	Կապիտալներ քիմիա շտոնական դրամաշնորհներ	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
ա)	Պետական բյուջեի ցկապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	0,0	0,00	0,0	0,0	0,0	0,0	0,0
3.	ԱՅԼԵԿԱՍՈՒՏՆԵՐ*	310,0	212,9	210,0	231,0	254,1	279,4	279,4
3.1	Տոկոսներ	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
3.2	Շահաբաժիններ	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
3.3	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	310,0	212,9	210,0	231,0	254,1	279,4	279,4

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Համայնքում չկա գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգման համակարգ, այդ պատճառով համայնքի բնակչությունը հողագործությունից մեծ եկամուտներ չի կարողանում ստանալ: Համայնքում ավելի զարգացած է անասնապահության ճյուղը: Սակայն, դրա հետագա զարգացման համար համայնքում խոտհարքների տարածքները չեն բավականացնում:

Համայնքում անասնապահությամբ, թռչնապահությամբ արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու: Համայնքի բնակիչներն ունեն լուրջ խնդիրներ ու դժվարություններ արտադրված գյուղատնտեսական մթերքներ իրացման հարցում: Թիկ համայնքը գտնվում է նախա լեռնային շրջանում, ձմեռը երկարատև է, որը խոչընդոտ է հանդիսանում անասնապահության համար:

Համայնքի գյուղատնտեսությանը մեծ վնասներ են հասցնում կարկուտը, սակավաջրությունը և անձրևային քիչ տեղումները:

Համայնքի բյուջեի սեփական եկամտները բավականին քիչ են, այդ իսկ պատճառով համայնքում հնարավոր չէ իրականացնել այնպիսի ծրագրեր, որոնք կնպաստեն համայնքի զարգացմանը:

2.5 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքի աշխարհագրական լավ դիրքը (մոտ գտնվելը մարզկենտրոն Աշտարակին, տարածաշրջանային կենտրոն Թալին քաղաքին)
- Համայնքի կողքով է անցնում Երևան-Գյումրի մայրուղին
- Համայնքում հիմնական դպրոցի գործելը
- Համայնքում հեռախոսակապի և թվային հեռուստատեսության առկայությունը
- Համայնքում առկա բնակիչների մոտ 75%-ը ունեն համակարգիչ և միացված են համացանցին
- Տնտեսական ջրի ներհամայնքային համակարգի առկայությունը և համեմատաբար բավարար վիճակը

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Խմելու ջրի բացակայությունը
- Համայնքում արտաքին (գիշերային) լուսավորության համակարգի բացակայությունը
- Համայնքի գազաֆիկացման բացակայությունը
- Մշակույթի տան բացակայությունը
- Ներհամայնքային ճանապարհների և փողոցների անբարեկարգ վիճակը
- Համայնքապետարանի և դպրոցի շենքերում ջեռուցման կենտրոնացված համակարգերի բացակայությունը, դրանց գործարկման դժվարությունները ձմռան ընթացքում

- Համայնքում աղբահանության կազմակերպման փոքր մասշտաբը և ցածր մակարդակը
- Միջհամայնքային հասարակական տրանսպորտի բացակայությունը՝ ապահովելու մշտական հաղորդակցություն մարզկենտրոնի, տարածաշրջանային կենտրոնի
- Համայնքում աշխատատեղերի խիստ պակասը, գործազրկության բարձր մակարդակը
- Համայնքում սոցիալապես խոցելի ընտանիքների մեծ քանակը

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Համայնքի գազաֆիկացումը նկատելիորեն կնպաստի համայնքի բնակչության կենցաղային կարիքների բավարարմանը
- Տարածաշրջանի այլ համայնքների հետ միջհամայնքային համագործակցություն ծավալելու դեպքում հնարավոր կլինի լուծել ընդհանուր աղբավայր ունենալու և շահագործելու հարցը, բոլոր այդ համայնքներում պատշաճ մակարդակով կազմակերպել աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը
- Մշակույթի տան կառուցումն ու շահագործումը մեծապես կնպաստի համայնքի մշակութային կյանքի ակտիվացմանը, երիտասարդների հետ նպատակային աշխատանքների կազմակերպմանը և իրականացմանը, երեխաներին արտադպրոցական դաստիարակության խմբակներում ներգրավմանը

ՀԱՄԱՅՆՔԻ ՆՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Ներհամայնքային փողոցներում և ճանապարհներում ջրահեռացման հեղեղատների բացակայության պատճառով դրանց վիճակի էլ ավելի վատթարացման վտանգը

- Աղբավայրի բացակայության պատճառով համայնքի տարածքում բնության ու շրջակա միջավայրի աղտոտման և վնասման վտանգը
- Համայնքում հողագործությամբ զբաղվելու անհեռանկարայնությունը վտանգում է գյուղատնտեսության այդ ճյուղի զարգացումը
- Համայնքի երիտասարդների արտագաղթը, արտերկրներ աշխատանքի մեկնելը և չվերադառնալը վտանգում է համայնքի կենսագործունեությունը, մասնավորապես՝ հիմնական դպրոցի հետագա լիարժեք գործունեությունը
- Ցրտահարություններ, կարկուտ

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1. Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի տեսլականն է՝

Համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության և վերամշակման տարածաշրջանային կենտրոն, բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար գրավիչ բնակավայր:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար

Համայնքի ռազմավարությունն է՝

- Համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնազլխաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով,
- Համայնքում կաթի, մսի հանձնման և վերամշակման արտադրամասի ստեղծում և գործարկում,
- Տնային պայմաններում բնական հյութերի արտադրության կազմակերպում և աստիճանական զարգացում,
- Համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում,

- Ներհամայնքային ճանապարհների և փողոցներ նորոգում և բարեկարգում, արտաքին լուսավորության համակարգի անցկացում, ճանապարհային նշանների տեղադրում,
- Համայնքի բնակչության սոցիալ – տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, տրանսպորտ և կապ, նախադպրոցական և դպրոցական հանրակրթություն, մշակույթ և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման և որակի անշեղ բարձրացման միջոցով,
- Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բարելավում մասնակցության ձևերի զարգացման միջոցով,
- Համայնքում է կոտորիզմի ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում՝ զբոսաշրջիկների գիշերակացիտնային պայմանների ապահովման, հասարակական սննդի, առևտրի և սպասարկման օբյեկտների ստեղծման, համապատասխան ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցման միջոցով:

Համայնքի զարգացման 2017-2021թթ. հնգամյա ծրագրի

Հիմնական նպատակներն են՝

- Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ակտիվացում և բարելավում՝ համայնքի ենթակառուցվածքների ընդլայնման և զարգացման միջոցով,
- Ներհամայնքային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում և լուսավորում,
- Համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, այգեգործության) զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով,
- համայնքի բնակչության կենցաղային պայմանների բարելավում՝ առանձնատների խմելու և տնտեսական ջրի

ջրամատակարարմաններ համայնքային համակարգերի նորոգման և ընդլայնման,

աղբահանության ծառայության կազմակերպման ճանապարհով,

- համայնքի դպրոցական հանրակրթության պայմանների բարելավում՝ հիմնական դպրոցի շենքի հիմնանորոգում
- Համայնքը գազաֆիկացնել, նպաստելով համայնքի բնակիչների կենսական պայմանների բարելավմանը

Համայնքում փաստացի բնակվող 20 ընտանիքներից 3 -ը հաշվառված են ընտանեկան նպաստի պետական համակարգում, որոնցից սոցիալապես անապահովության նպաստառուներ են գնահատվել 3 ընտանիքները (ընդհանուրի 33%-ը): Համայնքում բնակվում են նաև 1 հաշմանդամ:

- Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճը առաջիկա հինգ տարիների համար արտահայտված տոկոսներով

Հ/հ	Մուտքերի անվանումը	2016թ. փաստ.	2017թ. %	2018թ. %	2019թ. %	2020թ. %	2021թ. %	Ընդամենը աճ
1	2	3	4	5	6	7	8	9
1	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	0.01	0,0%	0,0%	0,0%	5,0%	5,0%	5,0%
			0,0	0,0	0,0	0,005	0005	0.01
2	Հողի հարկ	900.6	5,0%	10,0%	10,0%	10,0%	10,0%	10,0%
			45.03	90.06	90.06	90.06	90.06	405.2
3	Գույքա հարկ փոխադրամիջոցների համար	103.6	10,0%	10,0%	20,0%	20,0%	30,0%	30,0%
			10.3	10.3	20.6	20.6	30.9	92.7
4	Ապրանքների հոգսագործման կամ գործունեության հրականացման թույլտվության վճարներ	0	0	0	0	0	0	0
			0,0	0,0	0,0	0,0	0,0	0.0
6	Հողի վարձակալությունից եկամուտներ	212.9	0,0%	10,0%	10,0%	15,0%	20,0%	20,0%
			0,0	21,3	21,3	31,9	42.6	117.1

- Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը արտահայտված տոկոսով:

		Բնակիչների ընդհանուր թիվը 2016թ. փաստացի	Բնակիչների ընդհանուր թիվը 2017թ. կանխատեսում	Բնակիչների ընդհանուր թիվը 2018թ. կանխատեսում	Բնակիչների ընդհանուր թիվը 2019թ. կանխատեսում	Բնակիչների ընդհանուր թիվը 2020թ. կանխատեսում	Բնակիչների ընդհանուր թիվը 2021թ. կանխատեսում
1	Ընդամենը	164	167	171	178	184	190
2	Աճը տոկոսներով	0%	2%	3%	4%	3%	3%

- **Համայնքում առկա անասնազվիսաքանակը և կանխատեսումը առաջիկա հինգ տարիների համար**

N	Անվանումը	2016թ. փաստացի	2017թ. կանխատես.	2018թ. կանխատես.	2019թ. կանխատես.	2020թ. կանխատես.	2021թ. կանխատես.
1	Խոշորեղջերավոր անասունների զվիսաքանակը	190	245	300	320	375	450
2	Ոչխարների կայծերի զվիսաքանակը	2280	2550	2700	2900	3150	3500
3	Հավերի կայծերի զվիսաքանակը	200	320	375	420	460	490

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

1. Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում

Ներհամայնքային կենտրոնական փողոցները բերել բարեկարգ վիճակի՝ վերացնելով փողոցների ջրափոսերը և դրանք դարձնելով անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար տարվա բոլոր եղանակներին:

1. Ներհամայնքային փողոցները հողային են , խճապատման և բարեկարգման աշխատանքների իրականացումը նախատեսել 2017թ. ընթացքում:
2. Համայնքի 2017թ. բյուջեում նախատեսել 1000.0 հազ. դրամ գումար՝ վերանորոգելու 1.5 կմ երկարությամբ ներհամայնքային կենտրոնական փողոցները:
3. Մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ը իրականացնել և ավարտել ներհամայնքային փողոցների վերանորոգման և բարեկարգման աշխատանքները:

2. Ներհամայնքային ճանապարհների և փողոցների արտաքին լուսավորության և ամակարգի անցկացում

Բարձրացնել ներհամայնքային կենտրոնական փողոցով երթևեկության անվտանգության մակարդակը՝ դարձնելով այդ փողոցը լուսավոր, գեղեցիկ ու հարմարավետ համայնքի բնակիչների, զբոսաշրջիկների և տրանսպորտային միջոցների համար:

Մինչև 2018թ. պատվիրել և պատրաստել ներհամայնքային փողոցներում միակողմանի արտաքին լուսավորության համակարգի անցկացման աշխատանքներին ախազճանախահաշվային փաստաթղթերը՝ նախատեսելով 35 մետաղահենասայուններ՝ 4.5 մբարձրությամբ, 70 մմ տրամագծով, իրարից 40 մ հեռավորությամբ, յուրաքանչյուր հենասայուն վրա՝ 1 լուսային սարքավորում, նելեկտրահաղորդալարեր՝ 10 մմ հաստությամբ, 1.4 կմ երկարությամբ:

1. Համագործակցել և կնքել պայմանագիր <Հայաստանի էլեկտրացանցեր> ՓԲԸ <Թային > մասնաճյուղի հետ՝ տրամադրելու փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացման աշխատանքներն իրականացնող մասնագիտական խումբ:
2. Համայնքի 2018թ. բյուջեում նախատեսել 1000.0 հազ. դրամ գումար, մնացած 1900.0 հազար դրամը հայտհայթել բարեգործական կազմակերպություններից:
3. Ձեռք բերել արտաքին լուսավորության համակարգի հենասայունները, լուսային սարքավորումները և էլեկտրահաղորդալարերը:
4. Իրականացնել ներհամայնքային փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացման աշխատանքները և մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը այն հանձնել շահագործման:

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Ծրագրի կատարումը ստատարիների					Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները		
			2017	2018	2019	2020	2021	Համայնքի բյուջե	Դոնոր կազմ.-եր	Պետբյուջե, այլ
1.	Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում	1000.0	1000.0					1000.0		

2.	Ներհամայնքային փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացում	2900,0		2900.0				1000.0	1900.0	
3.	Համայնքի հիմնական դպրոցի շենքի հիմնանորոգում	10000,0			10000.0					10000.0
4.	Համայնքի գազաֆիկացում	35000.0				20000.0	15000.0	2000.0	15000.0	18000.0
5.	Համայնքի նոր ջրագծի կառուցում	30000.0		30000.0				2500,0		27500.0
	Ընդամենը	78900.0	1000.0	32900.0	10000.0	20000.0	15000.0	6500.0	16900.0	55500.0

4 ՀՀԶԾ ֆինանսավորում

1-ին ծրագրի(Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում) իրականացման համար 2017թվականի բյուջեում նախատեսել 1000.0 հազար դրամ 5113 հոդվածով : Ծրագիրն ամբողջությամբ հնարավոր կլինի իրականացնել համայնքի բյուջեի միջոցներով:

2-րդ ծրագրի (Ներհամայնքային փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացում, ընդհանուր արժեքը 2900,0 հազար դրամ) իրականացման համար 2018 թվականի բյուջեում նախատեսել 1000.0 հազար դրամ համայնքի բյուջեի 5112 հոդվածով, գումարի մնացած՝ 1900.0 հազար դրամն ակնկալել բարեգործական կազմակերպություններից:

3-րդ ծրագրի (Համայնքի հիմնական դպրոցի շենքի հիմնանորոգում, ընդհանուր արժեքը 10000,0 հազար դրամ) իրականացման համար 2019 թվականին դիմել ՀՀ Արագածոտնի մարզպետարան, որպեսզի միջնորդի ՀՀ կառավարության անհրաժեշտ միջոցներ հատկացնել ծրագիրը իրականացնելու համար:

4-րդ ծրագրի (Համայնքի գազաֆիկացում, ընդհանուր արժեքը 35000,0 հազար դրամ) իրականացման համար 2020 թվականի բյուջեում նախատեսել 2000,0 հազար դրամ համայնքի բյուջեի 5113 հոդվածով, գտնել դոնոր կազմակերպություններ, որոնք կկարողանան ներդրում կատարել 15000,0 հազար դրամ ծրագրի իրականացման համար, իսկ մնացած 18000,0 հազար դրամն ակնկալել ՀՀ պետ բյուջեի միջոցներով:

5-րդ ծրագրի (Համայնքի նոր ջրագծի կառուցում, ընդհանուր արժեքը 30000.0 հազար դրամ) իրականացման համար 2018 թվականի բյուջեում նախատեսել 2500.0 հազար դրամ 5112 հոդվածով : Ծրագիրն ամբողջությամբ իրականացնել համայնքի բյուջեի միջոցներով:

5. ՀՀԶԾ մոնիթորինգ

ՀՀԶԾ-ի մշտադիտարկումը (մոնիթորինգը) ՀՀԶԾ-ին երբքին մոնիթորինգն իրականացվելու է ՀՀԶԾ ն տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից կիսամյակը մեկ անգամ: ՀՀԶԾ-ի մոնիթորինգն իրականացվելու է ըստ լոբրտային սեփականավայրային ծրագրերի ու միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների: ՀՀԶԾ-ին երբքին մոնիթորինգի արդյունքները փաստաթղթի տեսքով ՀՀԶԾ-ի ն տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ն կներկայացնի համայնքի ղեկավարին, վերջինս էլ օրենքով սահմանված կարգով այն կներկայացնի համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր /1/

«Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարելավում»

(Ծրագրի հանվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	1. Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում 2. Համայնքի բնակիչների խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (հազար դրամ)				
		2016	2017	2018	2019	2020	2021
		1000	1000	800	500	500	500
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (հազար դրամ)				
		2016	2017	2018	2019	2020	2021
		1000	1000	800	500	500	500
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
0		0	0	0	0	0	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ <ul style="list-style-type: none"> • ճանապարհների հարթեցում • ճանապարհին առկա փոսերի վերացում • փողոցների կանաչապատում 						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 3800 Կապիտալ ծախսեր՝ 0 Ընդհանուր բյուջեն՝ 3800						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Հող, ավագ, ծառեր						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Անձրևների ժամանակնոր փոսերի առաջացում						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	01.05.2017-01.10.2021						
Ծրագրի համառոտ նկարագրություն	1. Ներհամայնքային ճանապարհների և առկա փոսերի վերացում 2. Փողոցների բարելավում, կանաչապատման աշխատանքների իրականացում						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր /2/

«Ներհամայնքային ճանապարհների և փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացում»

Վ»
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	1. Բերքահավաքի ժամանակ համայնքի բնակիչներին զիջերային ժամերին աշխատանքների կատարմանը և 2. Համայնքի գյուղատնտեսական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումն ապահովելու				
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք		
		2016	2017	2018	2019
		0	500	900	0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	3.	Ելակետային արժեք	Թիրախային արժեք		
		2016	2017	2018	2019
		0	500	900	0
	4.	Ելակետային արժեք	Թիրախային արժեք		
		2016	2017	2018	2019
		0	0	0	0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ <ul style="list-style-type: none"> • նոր ցանցի կառուցում հիմնական փողոցներում • նոր ցանցի կառուցում երկրորդային փողոցներում 				
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 1400 Կապիտալ ծախսեր՝ 0 Ընդհանուր բյուջեն՝ 1400				
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Էլ. Հաղորդալարեր, էլ. սյուներ, լամպեր				
Ծրագրի հիմնական ռիսկերը	Էլեկտրաէներգիայի սակագնի թանկացում				
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ, զբոսաշրջիկներ, համայնքնապետարան				
Ծրագրի սկիզբ և ավարտ	01.04.2017-01.11.2018				
Ծրագրի համառոտ	Փողոցներին ներհամայնքային ճանապարհների զիջերային լուսավորության ապահովում				

Նկարագրություն	
----------------	--

Հավելված 3

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր /3/

«Համայնքի հիմնական դպրոցի շենքի հիմնանորոգում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	1. Դպրոցական կրթության պայմանների բարելավում 2. Կրթության համար անհրաժեշտ նյութերի ձեռք բերումով որակյալ կրթության մատուցում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	0	1000.0	3000.0	0	0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	0	1000.0	3000.0	0	0
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
0		0	0	0	0	0	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ <ul style="list-style-type: none"> • Դպրոցի շենքի վերանորոգում • Դպրոցի նանհրաժեշտ գույքի ձեռքբերում • Դպրոցի տարածքի բարեկարգում 						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 200 Կապիտալ ծախսեր՝ 3800.0 Ընդհանուր բյուջեն՝ 4000.0						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Դպրոցի նանհրաժեշտ գույք, շինարարական աշխատանքներ, նախագծանախահաշվային փաստաթղթեր:						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Հիմնանորոգման ընթացքում դպրոց հաճախող երեխաների հաճախելիության ապահովման դժվարություն, քանի որ համայնքում չկան այլ ուսումնական հաստատություններ						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի դպրոցահասակ երեխաներ, համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	01.01.2018-31.12.2019						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ջամշուխի հիմնական դպրոցի շենքի հիմնանորոգում /հիմքերի ամրացում, տանիքի հիմնանորոգում, մետաղապլաստեպատուհանների և դռների տեղադրում, ջրամատակարարման, հակահրդեհային համակարգերի ստեղծում, գույքի ձեռքբերումնայլև/						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր /4/

«Համայնքի գազաֆիկացում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	1. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն 2. Գյուղատնտեսության խթանում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	0	0	0	20000	15000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	0	0	0	20000	15000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
0		0	0	0	0	0	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ Համայնքում անց են կացվում գազամատակարարման նոր համակարգեր						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0 Կապիտալ ծախսեր՝ 35000 Ընդհանուր բյուջեն՝ 35000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Գազ մատակարարող կազմակերպություն և բնակչության աջակցություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Անվճարունակ բնակիչներ						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	01.01.2020-01.11.2021						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի փողոցների գազաֆիկացման համակարգի անցկացում, որով կապահովվի բնակչությանը գազամատակարարմամբ և կնպաստի գյուղատնտեսության զարգացմանը, բարեկեցության մակարդակի բարձրացմանը ավելի քան 30 տոկոսով						

--	--

Հավելված 5

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ /5/

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

«Համայնքի նորոգողական աշխատանքներ»
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	1.Գյուղատնտեսության խթանում 2.Ոռոգովի այգիների ստեղծման խթանում 2.Ձմեռային ամիսներին ջրի սակավության նվազեցում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	0	0	1000.0	1000.0	0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	3.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	0	0	1000.0	1000.0	0
	4.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
0		0	0	0	0	0	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ <ul style="list-style-type: none"> Նոր ջրագծի կառուցում Թիվկ համայնքը դարձնել 100% ջրով ապահովված համայնք 						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝0 Կապիտալ ծախսեր՝2000 Ընդհանուր բյուջեն՝2000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	ակունք						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Զրագծի անցկացումը համայնքով անցնող միջպետական ճանապարհի տակով						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	01.05.2019-31.10.2020						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ամբողջ համայնքում ջրամատակարարման ապահովում						